# ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀՈՒՅՍ

Հոգևոր Արմատների Զարգացում
Մաս 5

*«<u>Տիրոջն ապավինողները</u> կնորոգվեն ուժով, թևերով վեր կսլանան արծիվների պես, կվազեն և չեն վաստակել, կգնան և չեն հոգնել:»* Եսայիա 40:31

Մեր Հույսի Պատճառները
Ա Պետրոս

1. Աստված ինձ ընտրեց, ես իրեն ընտրելուց առաջ

*«Ընտրված Հոր Աստծո կանխագիտության պես, Հոգու սրբությունովը...»* Ա Պետրոս 1:1-2

2. Աստված միշտ վարվում է ինձ հետ ողորմածությամբ

*«Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի հայրը, որ իր <u>առատ ողորմության</u> համեմատ մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը.»* Ա Պետ 1:3ա

3. Աստված ապահովագրել է իմ ապագան

*«Դեպի կենդանի հույսը Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելովը, դեպի այն անեղծ և անարատ և <u>անթառամ ժառանգությունը</u>, որ <u>երկնքումը պահված</u> է ձեզ համար:»* Ա Պետրոս 1:3բ-4

4. Աստծո զորությունը պիտի պահպանի ինձ

*«Որ <u>Աստծո զորությամբը</u> պահպանվում եք հավատքով դեպի պատրաստված փրկությունը:»* Ա Պետրոս 1:5

5. Աստված պատրաստում է ինձ հավիտենականության համար

*«Նրանով կուրախանաք, թեև հիմա՝ ինչպես որ հարկը պահանջում է՝ մի քիչ տրտմած եք կերպ կերպ փորձանքների մեջ, որ ձեր հավատքի փորձառությունն ավելի պատվական գտնվի քան կորստյան ոսկին, որ կրակով է փորձվում, գովության պատվի և փառքի համար Հիսուս Քրիստոսի հայտնությունումը.»* Ա Պետրոս 1:6-7

*«Միշտ պատրաստ եղեք հեզությամբ և երկյուղածությամբ պատասխան տալու ամենին, որ ձեր մեջ եղած հույսի համար պատճառ հարցնե:»* Ա Պետրոս 3:15